



FAÇADE EXTÉRIEURE - COLLÈGE ARMÉNIEN - VENISE

ԱՐՏՈՒԹՅՈՒՆ - ՄԱՐԿԱՆԱԳԱՆՈՒԹՅՈՒՆ - ՎԵՆԵՐԻԱ

ՀԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-7

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA*

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյոթ Թրափինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնասպետյան, Պիլոեր Քաուփ

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլյուսի Երոտական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12-13-ին ՀԱԻ Սիյուտքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սիյուտքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սիյուտքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ՀՈԴԿԱՃՆԵՐ

I. ՀՀ-ՍՓՅՈՒՌԹ, ՀՀ-ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՒ ՓՈԽԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուբեն Կարապետյան

Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաժին Վարդանյան

Մարիամ Հակոբյան

Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն-սփյուռք գործակցության բաղադրիչ (ՀՀ – Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպեճեան

Մերձատր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերություններ. արդի միտումներ, մարտահրավերներ և հնարաւորութիւններ 34

Գայանե Հակոբյան

Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում. հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան

Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՐՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Սյրեխան Զախարյան

Արևելյան Եւրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան

Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները. իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան

Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները, այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանայան

Սյուզաննա Բարսեղյան

Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան

«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինե Սվազյան

Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր
մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ***Նելլի Խաչատրյան******Մարիամ Հարությունյան***

Կրոնատաժության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան

Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի
կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՉԱՆԱՉԱՆՔ**V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ*****Կարեն Ասատրյան***

Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ
(19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան

«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ***Կասիա Արմենյան***

Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ***Տորք Դալայան******Լուսինե Հայրիյան******Անահիտ Խեչոյան***

Études arméniennes contemporaines, 2023, №15.

Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տազևսեան

Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ***Միզան Բոնպեան***

Հայագիտական ամստոնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին.

Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

230

II

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԻՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Սվետլանա Պողոսյան, պ.գ.թ.
ՀԱԻ / ՀԱԱՊՊԱԹ

ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՎԻՃԱԿ, ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՒ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Հոդվածում փորձ է արվում դիտարկելու Բուլղարիայի Հանրապետության (ԲՀ) Վառնա քաղաքի հայ համայնքի էթնոսոցիալական և էթնոմշակութային գործընթացները, քննել հայ ինքնության փոխակերպումների, սոցիալ-մշակութային գործընթացների արդի միտումներն ու զարգացումները: Կարևորվում է հայ համայնքի կարիքների գնահատման և զարգացման ծրագրի մշակման, ընդհանուր և առանձնահատուկ գծերի վերլուծության հարցը: Նորությային է այն, որ քննվում են Վառնայի հայության սոցիալական, մշակութային առանձնահատկությունները՝ բնութագրելով իրավիճակը: Հոդվածը շարադրելիս՝ օգտագործվել են արխիվային, գրավոր, ինչպես և համացանցային աղբյուրների նյութեր: Օգտագործվել են անձնական ազգագրական դիտարկումների և անհատական խորացված հարցազրույցների տվյալները, որոնք հավաքագրվել են 2023թ. սեպտեմբերին Բուլղարիայում: Կիրառվել են պատմահամեմատական, համադրական և վերլուծական մեթոդները: Ազգագրական դիտարկումները պատումային պատկերումներ են: Եւ կարևոր է, թե ինչ են անում մարդիկ, ինչը տարբերվում է այն բանից, թե ինչ են ասում, որ անում են¹:

*Հիմնաբաներ*² բուլղարահայեր, մշակույթ, դպրոց, կրթություն, կին, տղամարդ, ազգային հերոս, ազգային խորհրդանիշներ:

Առաջաբան

Ըստ Արշակ Ալպոյաճյանի՝ «Հայ ժողովուրդին կյանքին դժբախտ պայմաններն էին գլխավոր պատճառը Հայերու ցրումին աշխարհի ամեն կողմերը, և անոնք ողղակի հերևանք էին Հայաստանի աշխարհագրական դիրքին և ֆիզիքական կազմին, ուրեմն Հայաստանի աշխարհագրութիւնը «պատճառաց պատճառը» կը ներկայանայ Հայ գաղթականութեան»²: Չնայած դարերի ընթացքում հայրենի երկրից հայերի շարունակական արտագաղթին և արտերկրում հայ գաղթօջախների բազմադարյա գոյությանը, ներկայիս հայկական Սփյուռքը Ցեղասպանության հետևանք է: Ցեղասպանությունից առաջ հայ գաղթօջախներ են եղել Հայրենիքից դուրս, իսկ Սփյուռքը, որպես ամբողջություն, ձևավորվել է Ցեղասպանության հետևանքով:

Հայ Սփյուռքի առջև ծառացած մարտահրավերներից մեկը ինքնության պահպանման խնդիրն է, որ հիմնված է ազգային ինքնագիտակցության բա-

¹ Շիլլեր 2022, 405:

² Ալպոյաճեան 1941, 5–6:

ղադրիչների՝ լեզվի, կրոնի, ազգային մշակույթի, Ցեղասպանության հիշողության, հայ ավանդական ընտանիքի պահպանման գաղափարների վրա:

Սփյուռքը միատարր հանրույթ չէ. այն լեզվական, կրոնադավանական, կուսակցական, տարածքային և այլ չափորոշիչներով բաժանվում է բազմաթիվ խմբերի: 21-րդ դարում սփյուռքահայության մեջ, որպես ազգային ինքնության հենասյուն, կարևորվում է նաև հայոց պետականության հղացքն ու հզոր պետություն կերտելու գաղափարը³: Այս առումով բուլղարահայ համայնքը և՛ գաղթօջախ է, և՛ սփյուռք:

Բուլղարահայ համայնքի պատմությունից

Բուլղարիայի պատմական տարածքներում հայերի առաջին խմբերը հայտնվել են 5-րդ դարի 2-րդ կեսից: 7-րդ դարի կեսին Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև ծագած պատերազմների հետևանքով հայ նախարարներից ոմանք իրենց գործով անցել են բյուզանդացիների կողմը և բնակություն հաստատել Բալկաններում, Թրակիայում և Մակեդոնիայում: Հայ պատմիչների վկայությամբ՝ այս ժամանակաշրջանում Ֆիլիպոպոլսի (այժմ՝ Պլովդիվ) ամրոցի պահակախումբը բաղկացած էր հիմնականում հայ զորականներից⁴:

Բուլղարիայում հաստատված հայերի ճակատագիրը միահյուսվել է բուլղարացիների պատմությանը, արդյունքում՝ ստեղծվել է կենցաղի, սովորույթների և ավանդույթների ընդհանրություն: Շատ հայեր դեռևս միջնադարում բուլղարական արքունիքում հասել են բարձր պաշտոնների, իսկ հայագի գորավար Սամուիլ «Կոմսաճագը» թագավորել է արևմտյան Բուլղարիայում 997–1014 թթ.:

Բուլղարիայում եղել են հայ գրչության կենտրոններ. հնագույն մի ձեռագիր պահպանվել է դեռևս 1007-ից⁵: 11–17-րդ դարերում, օտար նվաճողների բռնությունների հետևանքով, դարձյալ Հայաստանից Բուլղարիա են գաղթել բազմաահազար հայեր, որոնք տարիների ընթացքում մերվել են տեղաբնակներին և հետագայում երկրի հանրային, քաղաքական ու տնտեսական կյանքում գործուն մասնակցություն և դերակատարություն ունեցել:

Բուլղարիայի տնտեսական կյանքում չկար որևէ ասպարեզ, որտեղ բուլղար, հրեա, հույն, թուրք և այլ գործարարների կողքին չլինեին հայեր, հատկապես՝ քաղաքներում, ուր նրանք հանդես էին գալիս արդյունաբերության, արհեստների և առևտրի տարբեր ճյուղեր նախաձեռնողների կամ հիմնադրողների դերում:

Բալկանյան պատերազմի նախօրեին բուլղարական կառավարությունը, նկատի ունենալով Թուրքիայի դեմ հայերի ազգային ազատագրական պայքարը և հայ-բուլղարական համագործակցությունը, տվել է իր համաձայնությունը՝ Բուլղարիայում ստեղծելու հայկական թեմ և առաջնորդարան:

³ Հովյան 2018, 108:

⁴ Ղասաբյան և այլք 2003, 124–125:

⁵ Ղասաբյան և այլք 2003, 128:

1880–1890 թթ. համայնքում գործել են դպրոցներ, թեմական խորհուրդ, հայ քաղաքական կուսակցություններ, հայկական հանրային, մշակութային կազմակերպություններ, հայրենակցական, մարզական միություններ, հրատարակվել են պարբերականներ:

Հայերը գործուն մասնակցություն են ունեցել նաև Բուլղարիայի ազատագրական, հանրային-քաղաքական պայքարում: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Բալկանյան ռազմաճակատում իրենց խիզախությամբ աչքի են ընկել բազմաթիվ հայեր: 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմի ժամանակ մեծ թվով հայ կամավորներ՝ Գարեգին Նժդեհի և Անդրանիկի հրամանատարությամբ, մասնակցել են Թուրքիայի դեմ պատերազմին, արժանացել պարգևների:

Բուլղարահայ գաղութում հանրային-քաղաքական կազմակերպությունների ակումբները միաժամանակ գրադարան-ընթերցարաններ էին: Առաջին և ամենամեծ գրադարան-ընթերցարանը Պլովդիվում 1883 թ. հիմնադրված «Գրասիրաց եղբայրություն» գրադարանն էր: Ներկայումս նման ընթերցարանները մասամբ պահպանվել են որոշ հայաշատ քաղաքներում:

Բուլղարահայերի մշակութային զարգացման գործին մեծապես նպաստել է բուլղարահայ պարբերական մամուլը, որի առաջին ծիծեռնակը՝ «Հույս» շաբաթաթերթը, լույս է տեսել 1884 թ.⁶ Ռուսինիայից Վառնա տեղափոխված Անդրանիկ Յոանեսկուի նախաձեռնությամբ և խմբագրությամբ:

Կարևոր քայլ էր 1994 թ. համայնքի համադրիչ խորհրդի ստեղծումը, որում ընդգրկված են հայկական հանրային-մշակութային կազմակերպությունների՝ ՀՄԸՄ, ՀԲԸՄ, ՀՕՄ, «Երևան», Համազգայինի «Վահան» և «Երևան» թերթերի ներկայացուցիչները:

Բուլղարահայ համայնքը ձևավորվել է հիմնականում Համիդյան ջարդերից և 1915 թ. Հայոց Ցեղասպանությունից փրկված, ինչպես նաև ՀՀ-ից տեղափոխված հայերից: 1920-ականներին Բուլղարիայում ապրել են մոտ 50 հազար հայեր: Ըստ Ալպոյաճեանի տվյալների՝ Բուլղարիայում ապրել են 25.000 հայեր⁶: Ներկայումս բուլղարահայ համայնքը (ներառյալ ՀՀ քաղաքացիները), ոչ-պաշտոնական տվյալներով, կազմում է շուրջ 30.000 մարդ: Բուլղարահայությունը հիմնականում ապրում է Սոֆիայում, Պլովդիվում, Վառնայում, Բուրգասում: Մինչև ժամանակ, փոքր քանակով հայեր բնակվում են նաև Շումեն, Ռուսե, Խասկովո, Ստառա Զագոռա, Պազարջիկ, Յամբոլ, Սիլիստրա, Պլեն և այլ քաղաքներում: Առավել սակավաթիվ են փոքր քաղաքներում և գյուղերում բնակվող հայերը:

Ամենամեծ հայկական համայնքը Պլովդիվում է, որտեղ բնակվում է 6000 հայ ԲՀ քաղաքացի, այնուհետև՝ Սոֆիան՝ 3200 հայ, Վառնան՝ 3000, Ռուսեն՝ 2000, Բուրգասը՝ 1700, և այլ բնակավայրեր: Հայ համայնքը բազմաշերտ է. կան արիեստավորներ, ծառայողներ, մտավորականներ: Հայերը մասնակցում են նաև երկրի հանրային-քաղաքական կյանքին: Բազմաթիվ հայեր ղեկավար

⁶ Ալպոյաճեան 1941, 2:

դիրքեր են գրավում տեղական կամ հանրապետական նշանակության կառավարման մարմիններում: ԲՀ Ժողովրդական Ժողովում (ԺԺ) բուլղարա-հայկական բարեկամության խորհրդարանական խմբի նախագահն է ԺԺ-ի պատգամավոր Յուրի Բերբերյանը: Հայ համայնքի շատ ներկայացուցիչներ ակնառու տեղ են գրավում գիտության, արվեստի և սպորտի ոլորտներում:

Բուլղարահայերի մեծամասնությունն ընդգրկված է ազգային հանրային-մշակութային հաստատություններում և կազմակերպություններում: Եկեղեցական կյանքը ղեկավարվում է թեմական խորհրդի կողմից: Հոգևոր թեմի առաջնորդն է Տիրայր արք. Մարտիրոսյանը: Գրեթե բոլոր հայաբնակ քաղաքներում, որտեղ գործում են եկեղեցիներ, կան եկեղեցական հոգաբարձություններ: Բուլղարիայում գերիշխողը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին է, կան նաև փոքրաքանակ հայ ավետարանական համայնքներ, մասնավորապես՝ Սոֆիայում, Պլովդիվում և Վառնայում:

Համայնքում գործում են բազմաթիվ կազմակերպություններ ու միություններ: Դպրոցական հոգաբարձություններ են գործում այն քաղաքներում, որտեղ բուլղարական դպրոցներում դասավանդվում է հայերեն կամ գործում են հայկական կիրակնօրյա դպրոցներ: Հայկական կազմակերպությունների ղեկավար մարմինները ներկայումս փորձեր են անում ստեղծելու բուլղարահայության ներկայացուցչական մի կառույց՝ նպատակ ունենալով պետության առջև ողջ հայ համայնքի ներկայացումը և ներհամայնքային խնդիրների կարգավորումը:

Բուլղարիայի Պլովդիվ, Վառնա, Ռուսե, Սոֆիա, Շումեն, Սլիվեն, Պազարջիկ, Բուրգաս հայաշատ քաղաքներում և այլ վայրերում հայկական եկեղեցիներին կից գործել են տարրական դպրոց-վարժարաններ, ուր մինչև 1895–1896թթ. սովորել են 9-ից 15–16 տարեկան հայ տղաները: 1903թ. հետո բուլղարահայ աղջիկները ևս սկսել են հաճախել հայկական դպրոցներ: Ներկայումս հայոց լեզվի ուսուցումը միջնակարգ դպրոցներում ընդգրկված է միայն մի քանի բուլղարական պետական դպրոցների պետական ծրագրում՝ շաբաթական 2 ժամ (Սոֆիայում և Պլովդիվում, այն էլ որպես ֆակուլտատիվ ժամեր), իսկ հայկական դպրոցներ, որպես այդպիսիք, փաստորեն, գոյություն չունեն: Միայն Բուրգասում և Վառնայում գործում են կիրակնօրյա դպրոցներ:

Վառնայի հայ համայնքը

Վառնան Բուլղարիայի խոշորագույն նավահանգիստն է, ունի լաստանավային հաղորդակցություն Օդեսայի, Փոթիի, Բաթումի և Ստամբուլի հետ: Ըստ 2010թ. պաշտոնական տվյալների՝ Վառնայի բնակչությունը կազմում է 366.837 մարդ, սակայն իրականում քաղաքում ապրում է մոտավորապես 600.000 մարդ: Գտնվելով Վառնայի ծոցի ափին և գրավելով ռազմավարական դիրք՝ քաղաքը շուրջ երեք հազարամյակ տնտեսական, հանրային, մշակութային խոշոր կենտրոնի դեր է խաղացել: Պատմական Օդեսոսը թրակիական ծովափնյա փոքրիկ բնակավայրից վերածվել է ծովային խոշոր նավահանգստի: Այստեղ ապրում են բուլղարներ, ռուսներ, թուրքեր և հայեր: Վառնայի հայ հա-

մայնքը հիմնել են 17-րդ դարի սկզբին այստեղ գաղթած դրինահայերը, ովքեր բնակվել են քաղաքի՝ հետագայում «Հայկական» կոչված թաղամասում⁷: 19-րդ դարի սկզբին Վառնայում եղել է 150 տուն հայ, իսկ դարի վերջին այստեղ բնակվել է շուրջ 1300 հայ: Հաջորդ տասնամյակներին հայերի թիվն աճել է Թուրքիայից փախած հայերի հաշվին՝ հասնելով 10.000-ի: Շուտով Վառնայում ապաստան գտած հայերի մի մասը տեղափոխվել է երկրի այլ քաղաքներ, տեղի հայերի թիվը նվազել է՝ կազմելով շուրջ 4000: Հայ բնակչության թվի հետագա տատանումները պայմանավորված են եղել շարունակվող ներգաղթով և 1930-ականների նկատելի արտագաղթով:

1946թ. շուրջ 300 վառնաբնակ հայեր ներգաղթել են Հայաստան: Ներկայումս (2003-ից) Վառնայում բնակվում է շուրջ 3000 հայ: 1990-ականներին այստեղ հաստատվել են հարյուրավոր հայեր ՀՀ-ից և ՌԴ-ից: Վառնայի հայ համայնքի ձևավորման և զարգացման գործում կարևոր դեր են խաղացել հայ առևտրականները: Նրանց գործունեությունը նկատելի էր ոչ միայն երկրի ներքին, այլև արտաքին շուկայում: Նրանք առևտրական կապեր են ունեցել Զմյուռնիայի, Տրապիզոնի, Կիպրոսի, Եգիպտոսի հայ առևտրականների և արդյունաբերողների հետ: Վառնաբնակ հայերը զբաղվել են արհեստներով, եղել են նաև բանվորներ և փոքրաթիվ գործարանատերեր:

1842թ. կառուցվել է Սուրբ Սարգիս հայկական եկեղեցին [նկ. 1], որին կից բացվել է Սիսակյան դպրոցը: Գործել են նաև ուրիշ դպրոցներ: 19-րդ դարի վերջից մինչև 1944թ. Վառնայում գործել են հայ քաղաքական կուսակցությունների տեղական կազմակերպություններ, հանրային և մշակութային միություններ, լուսավորական հաստատություններ: 1970-ականների 2-րդ կեսից համայնքի ազգային կյանքն անկում է ապրել և սկսել է վերականգնվել 1990-ականներին:

Վառնա քաղաքում ազգային կառույցներն ավելի համախմբված են: Նկատելի է նաև հայաստանցիների ակտիվ մասնակցությունը: Առավել ակտիվ են միջին սերունդը և տարեցները: Վառնայի համայնքում հայերը *բիզնես*ում, առողջապահության համակարգում, ոսկերչության ոլորտում հաջողած մարդիկ են: Հպարտությամբ նշում են շրջանային դատարանի նախագահ Վանուհի Առաքելյանի, դատավոր-*սկսույր* Կարեն Բեյլերյանի, Վառնայի ամենամեծ տրանսպորտային *ֆիրմայի* սեփականատեր և եկեղեցական վարչության ղեկավար Անդրանիկ Շաքարյանի անունները: Վառնայում գործում է հայկական պարաօլիմպիկ, մեկ դպրոց և մեկ մանկապարտեզ՝ ՀՕՄ-ի հոգածությամբ: Եկեղեցական վարչությունը մտադիր է հայկական դպրոցն ամենօրյա դարձնել: Դպրոցը դասագրքերի խնդիր ունի, ավելի ճիշտ՝ մատչելի հայերենով դասագրքերի ու նաև երիտասարդների հայրենաճանաչության:

⁷ Ղասաբյան և այլք 2003, 129–130:

Եկեղեցին՝ որպես հայկականության կարևոր դրսևորում

Վառնայի հայկական դիմագծի պահպանման, հայկականության դրսևորում է Ս. Սարգիս եկեղեցին, ուր իրականացվում են ազգային միջոցառումներ և ձեռնարկներ: 2012թ. սեպտեմբերի 28-ին Վարազա Ս. Խաչի տոնին մեծ շուքով նշվել է Վառնայի Ս. Սարգիս եկեղեցու օծման 170-ամյակը, որին կից գործել է Սիսակյան դպրոցը [նկ. 2]: Տոնական պատարագ է մատուցել Վառնայի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Բարթոլոմեոս քահանա Հակոբյանը: Ս. Պատարագի ավարտին Տեր Հոր հանդիսապետությամբ սարկավագներից ու դպիրներից կազմված եկեղեցական թափորը դուրս է եկել եկեղեցու բակ, ուր Տեր Հայրը Սուրբ Խաչով ու Ավետարանով օրհնել է ներկա հավատացյալներին, այնուհետև իր հոգևոր պատգամն ուղղել ներկաներին: Տեր Հայրը շնորհավորելով բոլորին եկեղեցու 170-ամյակի կապակցությամբ՝ նշել է հայ ժողովրդի՝ Աստծո կողմից որպես քրիստոնյա ազգ ընտրված լինելու և միշտ Աստծո օգնությունը վայելող ազգ լինելու մասին. *«170 տարի առաջ էլ այս քաղաքում ապրող հայերը զգացին, որ իրենք Աստծո ժառանգությունը կրող մարդիկ են և Աստծո օգնությամբ կարողացան կառուցել այս եկեղեցին»:*

Տոնական այս պատարագին ներկա են եղել Բուլղարիայի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ Անդրանիկ Շաքարյանը, Ս. Սարգիս եկեղեցու Ծխական Խորհրդի ատենապետ Մասիս Բագդատյանը, Վառնայի քաղաքապետ Իվան Պորտնիխը: Եկեղեցու բակում ելույթ ունենալով՝ քաղաքապետը շնորհավորել է հավատացյալներին և ասել, որ Ս. Պատարագի ժամանակ աղոթել է Վառնայի հայ համայնքի ամեն մի ներկայացուցչի առողջության և բարօրության համար: Քաղաքապետի խոսքով՝ *«Հայ համայնքը մեր քաղաքի հասարակության անքակտելի մի մասնիկն է»:* Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ հայ համայնքի ներկայացուցիչները պարոն Պորտնիխին ներկայացրել են Վառնայի հայկական գերեզմանատան հետ կապված խնդիրները: Քաղաքապետը խոստացել է սեղմ ժամանակահատվածում այդ խնդիրները լուծել: Ծխական Խորհրդի անունից ելույթ է ունեցել Ծխական Խորհրդի անդամ Էդմոն Մարտիրոսյանը, ով հակիրճ ներկայացրել է եկեղեցու 170-ամյա պատմությունը: Հետո ելույթ են ունեցել Վառնայի «Ս. Սարգիս» մշակույթի տան փոքրիկ երգչուհիներն ու «Գայանե Մարաշլյանի» պարախմբի անդամները:

Ս. Սարգիս եկեղեցու 170-ամյա հոբելյանին շատ լավ պատրաստվել էին Վառնայի Ս. Սարգիս եկեղեցու Ծխական Խորհրդի անդամները՝ ատենապետ Մասիս Բագդատյանի գլխավորությամբ: Նրանք դեռևս շաբաթներ առաջ սկսել էին իրենց աշխատանքները, 170-ամյակի առթիվ պատրաստել էին հայկական սրբանկարներ, Ս. Սարգիս եկեղեցու մասին հայերեն-բուլղարերեն թերթոններ, տոնին ծաղիկներով զարդարել էին եկեղեցին, ինչպես նաև տոնական միջոցառումից հետո հյուրերի և հավատացյալների համար եկեղեցու բակում կազմակերպել էին բաց հյուրասիրություն:

2018թ. մայիսի 28-ին Վառնայի հայ համայնքում մեծ հանդիսավորությամբ նշվել է Հայաստանի առաջին Հանրապետության անկախության տոնը և

Ս. Սարգիս եկեղեցու բակում տեղադրվել է հայ ֆիդայիներին նվիրված հուշաքար՝ ՀՅԴ կուսակցության անդամների անմիջական մասնակցությամբ: Համայնքի գրեթե բոլոր հայերն ու հայկական կազմակերպություններն իրենց ֆինանսական մասնակցությունն են բերել հայ քաջորդիներին նվիրված հուշաքարի տեղադրման համար: Բացման արարողության ժամանակ հուշաքարի օրհնության կարգ կատարելով՝ համայնքի հոգևոր հովիվ Տեր Բարթողիմեոս քահանա Հակոբյանն ընդգծել է. *«Այսօր մենք ուրախություն է հայ ժողովրդի համար, քանի որ հենց այս ֆիդայիների թափած արյան արդյունքում կատարվեց հայ ժողովրդի դարավոր երազանքը, Հայաստանը դարձավ անկախ հանրապետություն, նրանք պայքարեցին հանուն հայ ժողովրդի ազատության, պայքարեցին, որ հայը կարողանա իր սեփական երկրում ազատ խոսի հայերեն: Այսօր մենք հավերժացնելով նրանց հիշատակը տեղադրված հուշաքարի տեսքով՝ պետք է կարողանանք նաև մեր սրտերում հավերժացնել պայքարը հանուն հայապահպանության»*: Խորհրդանշական է, որ եկեղեցու բակում տեղադրված են ցուցանակներ՝ Սարգսիսի հերոսամարտի հուշահամալիրի կոթողների պատկերներով [նկ. 3]:

Եկեղեցին չունի հոգևորական, երեք քահանա հեռացել էր ծառայությունից՝ թեմական խորհրդի հետ ունենալով որոշակի խնդիրներ, որոնք կապված էին եկեղեցու շինության ժառանգության և թեմական խորհրդի կանոնադրական կետերի հարցի հետ: Մեր այցելության ժամանակ՝ 2023թ. սեպտեմբերին, թաղման արարողության կարգը կատարելու էր եկել Պլովդիվի քահանան⁸:

Զորավար Անդրանիկի տունը և հիշատակները՝ որպես հայկականության դրսևորում

Հայկականության հաջորդ կարևոր արտահայտությունն է՝ զորավար Անդրանիկի տունը, որ կանգուն է առ այսօր, գտնվում է Վառնայի Գալաթա բարձունքում: Տունը նախատեսված է վերածել Անդրանիկ Օզանյանի տուն-թանգարանի: Բուլղարիայի *կուրորդ*ային այս քաղաքում ֆիդայապետի առանձնատունը նրա ունեցած տներից միակն է, որ կանգուն է մնացել [նկ. 4]: ԱՄՆ-ի տունը վառվել է, Արևմտյան Հայաստանինը նույնպես չի պահպանվել: Վառնայում գտնվող տունը 1900-ականների առաջին տասնամյակում Անդրանիկ Օզանյանը կառուցել է իր ձեռքով, այստեղ ապրել է 6-7 տարի: 1900-ականների սկզբին, երբ Անդրանիկը եկել է Բուլղարիա, արդեն բավական հայտնի էր տեղում: Իշխանությունները նրան հողամաս են հատկացրել և թույլատրել առանձնատուն կառուցել: Տարածքը չափազանց մեծ է թվում, և նա մի մասը նվիրում է ուրիշներին: Բավանյան պատերազմի ժամանակ՝ 1912-1913թթ. Զորավար Անդրանիկը Արևմտյան Բուլղարիայում, որպես հայկական գնդի հրամանատար, կռվել է թուրքերի դեմ, դրա ավարտից հետո վերադարձել է այստեղ՝ իր տուն: Երբ 1914թ. սկսվում է Առաջին Աշխարհամարտը, նա տեղափոխվում է Կովկաս

⁸ Բուլղարիա, 2023թ. սեպտեմբեր:

և ռուսական բանակի շարքերում դառնում հայ կամավորական խմբերի հրամանատար:

2013թ. տունը գնվել է Բուլղարիայի հայերի միության նախագահ՝ հայաստանցի Հարություն Հովսեփյանի ջանքերով և նրա անձնական միջոցներով: Մինչև այդ նախատեսվում էր, որ կառույցը պետք է ապամոնտաժվի: Անդրանիկի կնոջ դստեր ժառանգները որոշել էին այն վաճառել, և տեղում պետք է վեր խոյանար բազմաբնակարան շենք: Հ. Հովսեփյանը ձեռք է բերել նաև Անդրանիկի ուսադիրները՝ 10.000 դոլարով:

Հայկականության պահպանման գործում, բացի եկեղեցուց, կարևոր դերակատարություն ունեն համայնքում գործող կազմակերպությունները: Բուլղարիայի հայերի միության գլխավոր քարտուղար Ներսես Կետիկյանը նշել է, որ նախատեսում էին թանգարանը բացել Զորավարի ծննդյան 150-ամյակին, բայց չհասցրին, քանի որ նախապատրաստական աշխատանքները բազմաթիվ էին: Ցանկանում են առանձնատունը բերել հարյուր տարի առաջ՝ Անդրանիկի ապրած ժամանակվա տեսքին: Այդ ուղղությամբ աշխատանքներ են տանում ազգագրագետները, հնագետները: *«Արտաքինից ամեն ինչ նույնն է, ինչ որ այն ժամանակ, բայց տանիքը բավական վնասված է, այն պետք է գրեթե ամբողջությամբ փոխվի: Նաև ցանկանում ենք, որ վերականգնողական աշխատանքները լավագույն ձևով կատարվեն: Դրա համար հիմա ամեն ինչ դանդաղ է ընթանում: Եւ, երբ որ տունը վերջնական տեսքի բերվի, ամեն բան ավարտվի, անմիջապես դրանից հետո այն ներկայացվելու է պետական պարկյան մարմիններին, որ գրանցվի պատմական հուշարձանների ռեգիստրում, որպեսզի այլևս դրանից հետո, կապ չունի՝ ով կլինի սեփականատերը, ընդհանրապես որևէ մեկը չկարողանա այդ տանը ձեռք տալ»:*

Ն. Կետիկյանը կարծում է, որ չնայած Անդրանիկի տուն-թանգարանը որպես հուշարձան գրանցելու ճանապարհին սպասվող դժվարություններին, իրենք կկարողանան հասնել նպատակին: *«Այո, դժվարություններ կան անշուշտ, բայց ամեն ինչ անելու ենք, որ որևէ դժվարություն մեզ հետ չկանգնեցնի, այլ մինչև վերջ մենք մեր նպատակներին հասնենք, և այդ տունը ոչ միայն դառնա տուն-թանգարան, լինի պարզապես շենք, այլ ուխտատեղի մեր ժողովրդի համար: Կարգի է բերվել Զորավարի տան բակը, որը բավական անմխիթար վիճակում էր ու կարծես անուստի էր վերածվել: Միաժամանակ նաև մենք հայտարարել ենք և հավաքագրում ենք թանգարանային նմուշներ, իրեր, որոնք որ պարկյանել են Անդրանիկին կամ որևէ ձևով կապ են ունեցել իր հետ, որպեսզի երբ որ թանգարանը բացվի, այդ բոլոր իրերը, որոնք ամենայն խստապահանջությամբ գրանցվում են մեզ մոտ, դրված լինեն թանգարանում՝ ի ցուցադրություն այցելուների»:*

Ստացված առարկաներից մի քանիսը թվարկելով՝ նա նշել է, որ իրենց մոտ է հայդուկապետի մեծադիր հայելին, որը նա անձամբ է գնել և տեղադրել այդ տանը: Հետագայում այդ հայելին անցել էր ուրիշ քաղաքում ապրող հայ ընտանիքի ձեռքը, որը այն նվիրել է տուն-թանգարանին: Վառնայի այս տան առաջին կողպեքի բանալին, որն օգտագործել է Անդրանիկը, ևս իրենց մոտ է: Բալկանյան պատերազմի ժամանակ հայկական զնդի իր զինվորների նվիրած

մոնոշարունկը ևս պահպանված է: Այս տանը Անդրանիկի ապրած տարիներից որոշ կահույք ևս պահպանվել է: Զորավարի կնոջ ժառանգները վստահեցրել են, որ դա հենց տվյալ ժամանակաշրջանի է: Մասնագետը ևս հաստատել է այդ պնդումը: Այժմ կահույքը մշակվում ու վերականգնվում է: Նախատեսվում է մասնագետների հետ խորհրդակցելուց հետո նաև պարսպապատել Զորավարի տունը այնպես, ինչպես եղել է ժամանակին⁹:

Բացի այդ, քաղաքի Գալաթա հրապարակում տեղադրվել է Զորավար Անդրանիկի 6 մետրանոց գրանիտե արձանը [նկ. 4]: Վառնայում ՀՕՄ-ի ատենապետ Ֆլորա Վարդանյանի խոսքով՝ Զորավար Անդրանիկի արձանի մասին քաղաքապետարանի որոշումը բացասաբար է ընդունվել թուրքերի կողմից: Երբ Հայաստանում պատվիրված քանդակը Թուրքիայով Բուլղարիա տեղափոխելիս սահմանին հետաքրքրվել են՝ ո՞ւմ արձանն է, թուրքերին ասել են՝ իբր բուլղարացի բանաստեղծ Պ. Յավդորովի կիսանդրին է: Արձանը տեղադրելուց հետո ամեն ինչ «ջրի երես» է դուրս եկել՝ առաջացնելով ոչ միայն Վառնայի թուրքական մեծաթիվ համայնքի, այլև բուն Թուրքիայի դժգոհությունը: Բուլղարիան, սակայն, չի տրվել թուրքական շանտաժին՝ ի տարբերություն Ռուսաստանի, որը վերջին պահին Սոչիում ապամոնտաժել է Անդրանիկի արձանը¹⁰:

Վառնայի հայերը շահագրգիռ են եղել Անդրանիկի արձանի կանգնեցմամբ, այդ հարցում մեծ է եղել ՀՅԴ և ՀՕՄ դերը: Նրա ասելով՝ Գալաթայում, որտեղ ժամանակին ապրել է Անդրանիկը, շատերը մոռացել էին հերոսի մասին: Ինչ վերաբերում է նրա ապրած տանը, այժմ այն ոչ թե թանգարան է, այլ մասնավոր տուն: Լավ է, որ հուշատախտակ է փակցված:

Հայկականության այլ դրսևորումներ

Վառնայի կենտրոնում՝ քաղաքապետարանի մոտ, կա նաև Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան: Ֆ. Վարդանյանը նշել է, որ չնայած Վառնայում հայերը փոքրաթիվ են, բայց իբրև *էլեկտորատ*, բավական ակտիվ են, և քաղաքային խորհրդի ու քաղաքապետի ընտրությունների ժամանակ առիթն օգտագործում են հայնպատ ձեռնարկներն իրականություն դարձնելու համար: Ամեն տարի ապրիլի 24-ին Վառնայի քաղաքապետարանը թույլատրում է երթ անցկացնել, ու շուրջ 300 մարդ անցնում է քաղաքի կենտրոնական փողոցներով: Հայերին են միանում Վառնայի քաղաքապետը, Ռուսաստանի, Լեհաստանի հյուպատոսները, մակեդոնացիներ, բուլղարացիներ: Այդ ընթացքում դադարեցվում է տրանսպորտային երթևեկությունը:

Վառնայի հայկական կառույցներում հայտնի և հայկական համայնքի ակտիվ անդամներից Երվանդ Գայազատեն զանազան պաշտոններ է վարել:

⁹ Ի դեպ, Երևանում ևս գործում է Ֆիդայիների և Զորավար Անդրանիկի թանգարան՝ որպես Բեզլարյան ընտանիքի մասնավոր սեփականություն, և կազմակերպություն, որտեղ պահպանվում ու ցուցադրվում են Զորավարի անձնական իրերը, զենքը ևն:

¹⁰ «Բուլղարիայում վերանորոգվում է Զորավար Անդրանիկի տունը. վերածվելու է տուն-թանգարանի», Panarmenian net, 2016 (հոկտեմբերի 5) <https://panarmenian.net/arm/news/222462> (ղիտումը՝ 10.12. 2023):

Պատմում է, որ Բուլղարիայում համայնավարության տարիներին բոլոր կառույցներն արգելված էին, բացի «Երևան» միությունից: Այժմ բոլորը համախմբված են և գործում են Ս. Սարգիս եկեղեցու տարածքում՝ եկեղեցական վարչության հետ միասին: Նրա խոսքով՝ իրենց եկեղեցական վարչությունը «ուժով» է կարողանում ինչ-ինչ հարցեր դնել քաղաքապետի առաջ: Եկեղեցական վարչության անդամները հայկական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ են: Ե. Գայազատեի խոսքով՝ հայերը հարգված են Վառնայի քաղաքային իշխանության կողմից: Շատերի պապերն ու հայրերն էլ լավ համբավ են ունեցել այս երկրում: Օրինակ՝ իր պապը՝ Ստեփան Գայազատեն, որ Զմյուռնիայից էր, շուրջ 40 տարի Իտալիայում հյուպատոս է եղել ու անգամ արժանացել այդ երկրի բարձրագույն պետական պարգևին: Ե. Գայազատեն հույս ունի, որ բուլղարահայերի ու ՀՀ միջև ավելի աշխույժ կապեր կլինեն:

Վառնայի հայ դատի հանձնախմբի պատասխանատու Սարգիս Տուվարջյանը այն համոզումն ունի, որ չպետք է հայ լինել զուտ՝ ազգանվան «յան» վերջավորությամբ: Նա գտնում է, որ այսօրվա բուլղարահայ երիտասարդը պետք է իմանա իր արմատները, գիտենա, թե ինչու են իր նախնիները հայտնվել Բուլղարիայում և ինչ մարտահրավերներ կան հայության առաջ: Նա նաև հպարտ է, որ ՀՀ-ից դուրս միայն Վառնայում Անդրանիկի անունով հրապարակ կա¹¹:

Անդրանիկի արխիվային լուսանկարները հատուկ ցուցադրված էին քաղաքի «Անտիկվար» խանութի պատի երևացող հատվածում, որը սիրով ներկայացրեց խանութի տերը՝ ծագումով կիրովաբադցի տղամարդը: Շատ ուշագրավ էր և «Հայ» անվամբ ընտանեկան հյուրանոցը, որտեղ նկատելի էր ավանդականի *ռեյթրո* ներկայացման միտումը:

Հայկականության պահպանման գործում կարևոր դերակատարություն ունի նաև «Գայանե Մարաշլյան» պարային համույթը, որի անդամների համերգը և հայկական տարազների ցուցադրությունը եղավ Հնագիտական թանգարանի տարածքում:

Վառնայի հնագիտական թանգարանում առկա էին հայկականության տարրեր: Հիմնական ցուցադրության մեջ քարտեզի վրա ներկայացված էր տեղեկատվություն՝ Կուտինա/Քյոթահիա քաղաքի հայ արհեստավորների խեցեգործական առարկաների՝ պնակների, ափսենների պատրաստման մասին: Առանձին ցուցափեղկում ցուցադրված էին Քյոթահիայի խեցեգործական արվեստի եղանակով պատրաստված ափսենները, որոնց վրա պատկերված կանանց կերպարները ուշագրավ զուգահեռներ ունեն Անիի հնագիտական առարկաների պատկերների հետ [նկ. 5]: Դա պատահական չէ, քանի որ Անիի վարպետները 14-րդ դարից հետո հայտնվել էին Քյոթահիայում:

Վառնա քաղաքի հրապարակում քաղաքների անունների շարքում կա նաև Երևանի անունը: Շատ ուշագրավ է քաղաքային այգում Շառլ Ազնավուրի հրաշալի հուշարձանը, որի հեղինակը բուլղար քանդակագործ է [նկ. 6]:

¹¹ «Վառնայում կոլ չգնացին թուրքական շանտաժին» // «Առավոտ», 2011 (սեպտեմբերի 21) <https://www.aravot.am/2011/09/21/336376/> (ղիտումը՝ 28.11.2023):

Հստ անհատական հարցազրույցների տվյալների՝ արտագաղթի սկզբնական շրջանի մշակությային հարմարվողականության դժվարություններով հանդերձ, որոշ հայաստանցիներ, և որ կարևոր է՝ կանայք, բավականին կայացել են՝ ներգրավվելով հանրային գործունեության մեջ:

Եզրահանգումներ

Հայ ինքնության հենասյուներից միակը, որը չի ենթադրում ներքին տարաբաժանումներ, Ցեղասպանության հիշողությունն է: Կարևորագույն բաղադրիչ է նաև պետականակենտրոնությունը կամ հզոր հայրենի պետության գաղափարախոսությունը: Այն միավորում է տարալեզու, տարադավան, տարբեր կուսակցությունների պատկանող կամ համակրող, տարբեր տարածաշրջաններում ու երկրներում ապրող հայերին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ: Ազգային ինքնության քաղաքացիական և էթնիկ տեսակները ներդաշնակ համատեղվում են: Կայացած ու հզոր պետականությունը չի փոխարինում ինքնության մյուս բաղադրիչներին՝ լեզու, կրոն, մշակույթ, պատմական հիշողություն են: Այն սփյուռքահայի ազգային ինքնագիտակցության առանցքում է՝ իրենով սնելով և ուժեղացնելով նաև այդ բաղադրիչները:

Հզոր հայրենի պետականությունն ազատում է սփյուռքահայությանը պետականագուրկ ժողովրդի բարդությից, ներշնչում է հայությանը պատկանելու հպարտության զգացում: Ամրապնդում և շեշտում է հայությանը սեփական պատկանելությունը, ինչն էլ, իր հերթին, մղում է առավել նախանձախնդիր լինելու հայոց լեզվի, քրիստոնեական հավատի, հայ մշակույթի, պատմական հիշողության պահպանման և ամրապնդման հարցում:

Հայոց ինքնության բաղադրիչների՝ ժամանակի ընթացքում նահանջը դրսևորվում է խառնամուսնությունների աճով, հայկական դպրոցների և աշակերտների թվաքանակի նվազմամբ, լեզվի տիրապետման, մշակությային հաղորդակցության և ազգային ինքնագիտակցության թուլացմամբ և ձևափոխմամբ:

Հայաստանի և Բուլղարիայի համար փոխգործակցության հեռանկարային ոլորտներ են համարվում տրանսպորտի, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և զբոսաշրջության բնագավառները: Թեև ներկայումս, ըստ մեր գրուցակիցների, նկատվում է թուրքական և ադրբեջանական գործոնների ուժեղացում, սակայն Բուլղարիայի համար ասում են, որ *«Սովետի փոշին դեռ մնացել է»*:

Վառնայի հայ համայնքը և քաղաքում գործող կազմակերպությունները կարիք ունեն համախմբման և միաբանվածության՝ հատկապես ազգային շահերին առնչվող խնդիրներում և եկեղեցու հետ կապված հարցերում:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲՀ	Բուլղարիայի Հանրապետություն
ԺԺ	Ժողովրդական Ժողով
ՀԲԸՄ	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
ՀՄԸՄ	Հայ մարմնակրթական ընդհանուր միություն
ՀՕՄ	Հայ օգնության միություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԼՊՕՅԱՃԵԱՆ 1941

Ալպոյաճեան Ա.Ա., Պատմութիւն Հայ գաղթականութեան, Հայերու ցրտումը աշխարհի զանազան մասերը (սկիզբէն մինչև ԺԱ դար Քրիստոսի), Գահիրէ, Տպ. Սահակ Մեսրոպ, 1941, 215 էջ:

ՀՈՎՅԱՆ 2018

Հովյան Վ.Ռ., Համեմատական սփյուռքագիտություն. հունական փորձ // 21-րդ դար, 2018, № 3/79, 108–120:

ՂԱՍԱԲՅԱՆ և այլք 2003

Ղասաբյան Զ., Ճինգոզյան Կ., Բուլղարիա // Հայ Սփյուռք հանրագիտարան (խմբ. Հ. Այվազյան, Ա., Սարգսյան), Երևան, Հայկ. հանրագիտ. հրատ., 2003, 123–138:

ՇԻԼԼԵՐ 2022

Շիլլեր Ն.Գ., Սփյուռք, միգրացիա, անդրգաղթականություն // Սփյուռքագիտություն. քննական անթոլոգիա (խմբ. Վ. Սահակյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2022, 383–419:

Svetlana H. Poghosyan, Ph.D.

Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle «Sardarapat»

SOCIOCULTURAL FEATURES OF THE ARMENIAN COMMUNITY OF VARNA: SITUATION, TRENDS AND DEVELOPMENTS

Keywords: Bulgarian Armenians, culture, school, education, woman, man, national hero, national symbols.

One of the challenges facing the Armenian Diaspora is the problem of preserving identity, which is based on language, religion, national culture, the memory of the Genocide, and the preservation of the traditional Armenian family, which were considered the components of national self-consciousness. In the 21st century, among the Armenians of the Diaspora, the idea of Armenian statehood, the idea of creating a powerful native state as a guarantee of the longevity and development of all Armenians is attached importance as a pillar of national identity.

The report attempts to examine the ethnosocial and ethnocultural processes within the Armenian community of Varna (Bulgaria), focusing on the ongoing transformations of identity, modern sociocultural trends and developments.

A manifestation of the preservation of the Armenian image of Varna is the Church of St. Sargis, where activities are carried out for the benefit and in the name of the preservation of the Armenians. Besides the church, community organizations also play an important role in the preservation of Armenians. An important task is to provide education for Armenian children in their native language.

Another important symbol for the Armenians is the house of Zoravar Andranik, located on Galata Hill in Varna. The monument to Charles Aznavour in the city park, the author of which is a Bulgarian sculptor, is quite remarkable.

The Armenian community is diverse in origin and occupation. Apart from the difficulties of cultural adaptation of the initial period, some immigrants from Armenia, especially women, have largely achieved success by getting involved in public activities. Having overcome the cultural shock associated with the difficulties of adapting to a new environment, they communicated and worked with foreigners living in society.

In parallel with the desire to remain faithful to the Armenian elements, the influence of other people's mores on the Armenian family is noticeable. There are also unique cases of non-standard marriages, trends and manifestations of new perceptions in clothing and appearance.

The community, especially acting organizations, need consolidation and cohesion, especially in matters related to national interests and issues of the church.

Светлана Айковна Погосян, к.и.н.

Институт археологии и этнографии, НАН РА

Национальный музей этнографии армян и истории освободительной борьбы «Сардарапат»

СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЕ ОСОБЕННОСТИ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ВАРНЫ: СИТУАЦИЯ, ТЕНДЕНЦИИ И РАЗВИТИЯ

Ключевые слова: болгарские армяне, культура, школа, образование, женщина, мужчина, национальный герой, национальные символы.

Одним из вызовов, стоящих перед армянской диаспорой, является проблема сохранения идентичности, которая основана на языке, религии, национальной культуре, памяти о геноциде, идеях сохранения традиционной армянской семьи, которые считались составляющими национального самосознания. В 21-ом веке, как столпу национальной идентичности, среди армян Диаспоры большое значение придается идее армянской государственности и создания мощного государства-родины как гарантии долговечности и развития всех армян.

В докладе предпринята попытка рассмотреть этносоциальные и этнокультурные процессы армян Варны армянской общины Болгарии, изучить происходящие преобразования идентичности, современные социокультурные тенденции и развития.

Проявлением сохранения армянского облика Варны является церковь Сурб Саркис, где осуществляются мероприятия во благо и во имя сохранения армянства. В деле сохранения армянства важную роль, помимо церкви, играют организации, действующие в общине. Важной задачей является обеспечение образования армянских детей на их родном языке.

Следующим важным проявлением армянства является дом полководца Андраника, который расположен на холме Галата в Варне. Очень примечателен памятник Шарлю Азнауру в городском парке, автором которого является болгарский скульптор.

По происхождению и роду деятельности армянская община разнообразна и многослойна. Помимо трудностей культурной адаптации начального периода, некоторые иммигранты из Армении, особенно женщины, в значительной степени добились успеха, вовлекаясь в общественную деятельность. Преодолев культурный шок, связанный с трудностями адаптации к новой среде, они общались и работали с иностранцами, живущими в обществе.

Параллельно стремлению оставаться верными армянству, заметно влияние чужих нравов на армянскую семью. Есть также уникальные случаи нестандартных браков, тенденции и проявления новых восприятий в одежде и во внешнем облике.

Община, особенно действующие организации, нуждаются в консолидации и сплоченности, особенно в вопросах, связанных с национальными интересами и вопросами церкви.

Ներկայացվել է՝ 21.02.2025,

գրախոսվել է՝ 18.04.2025,

ընդունվել է՝ 10.07.2025:

Սվեդլանա Պողոսյան

ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԻՐԱԿԻՃԱԿ, ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՒ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ



Նկար 1. Սուրբ Սարգիս հայկական եկեղեցին (կառուցված 1842 թ.), կից՝ Միասկյան դպրոցը



Նկար 2. Վառնայի Միասկյան դպրոցի շենքը



Նկար 3. Սարգսրապատի հերոսամարտի հուշահամալիրի հուշակոթողների պատկերներով պատրաստներ



Նկար 4. Վառնայում Անդրանիկ Օզանյանի տունը և 6 մետրանոց գրանիտե արձանը



Նկար 5. Բյուրահիսյի խեցեգործական արվեստի եղանակով պատրաստված ափսեներ



Նկար 6. Շառլ Ազնավուրի արձանը Վառնա քաղաքում

ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա

Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Մոսի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի

պատմական գիտությունների դոկտոր
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ / ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Զախարկեիչ Ստեփան Արթուրի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
 Եւրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատրյան Նելլի Ռաֆիկի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի

պատմական գիտությունների դոկտոր
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բագրատի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճեպեճեան Հրայր Վահէի

աստուածաբանության դոկտոր

Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինե Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող

salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսեսի

սոցիալական գիտությունների թեկնածու

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի

Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն
gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող

sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի

պատմական գիտությունների թեկնածու

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային

թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող

poghosyansvetlana26@aspu.am

Սվազլյան Վերժինե Գառնիկի

բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,

ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաժին Վարդանի

պատմական գիտությունների թեկնածու

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ

vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող

lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական

գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող

r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan

On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan

Mariam Hakobyan

The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian

Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan

Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan

Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich

Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan

Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan

Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan

Suzanna Barseghyan

Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan

The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian

The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian

Mariam Harutyunyan

Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan

Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan

Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan

The Role of Weekly Newsletter “Hayastan” in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian

Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan

Lusine Hayriyan

Anahit Khechoyan

Études arméniennes contemporaines, 2023, N° 15 :
La presse de langue arméniennes en France et la création d’un espace transnational 200

Antranik Dakessian

Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan

The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян

О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян

Мариам Акопян

Политика идентичности как составляющая сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебеджян

Отношения между армянскими общинами Ближнего Востока и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян

Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре: точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян

Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич

Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян

Социально-культурные особенности армянской общины Варны: ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян

Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше, результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян

Сюзанна Барсегян

Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян

Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры: пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян

Уровень сохранения армянства у американских армян по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян

Мариам Арутюнян

Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян

Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян

Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян

Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян

Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян

Лусине Айриян

Анаит Хечоян

Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян

Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырнялян

40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 221

230

ՀԱՊԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան
ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատուրյան
տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան
ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա):

